ՄՐԵՆԻ ԵՎ ԹԱԼԻՆԻ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Մրենի տաճարի շինության արձանագրությունը փորագրվել է եկեղեցու արևմտյան ճակատին, պատուհանի երկու կողմերում։ Բաղկացած է երեք տողից։ Ժամանակին տեղադրված է եղել 12 քարերի վրա, որոնցից այժմ բացակայում են տողերի սկիզբը պարունակող առաջին, յոթերորդ և վերջին՝ տասներկուերորդ քարերը։ Սրանց տեղը ազուցված են երեք խաչքար և մի փոքր զարդաքանդակ։

Տառաձևերը փորագրված են գեղեցիկ և համաչափ, բացառությամբ տասնմեկերորդ քարի երրորդ տողի վերջավորության, որտեղ նրանք նկատելի սեղմված են։ Այդ սեղմվածության հետևանքով երրորդ տողը տառերի քանակով որոշ գերազանցություն ունի առաջին և երկրորդ տողերի նկատմամբ։ Առաջին տողում փորագրված է 77 (ներառյալ և պատուհանի մոտի բացակայող յոթերորդ քարի հատվածը, որը վերականգնել է Հ. Ա. Օրբելին), երկրորդ տողում՝ 75 և երրորդ տողում՝ 81 տառ։ Միաժամանակ, եթե հաշվի առնենք, որ առաջին և երկրորդ տողերում բարի վնասվածքներն իրենց հերթին գրելու ժամանակ 3—4 տառերի տեղ են զբաղեցրել, ապա եղած տարբերությունը հիմնականում կարելի է աննշան համարել։

Այս արձանագրությունը հրատարակել է նաև Կ. Կոստանյանը[1]։ Սակայն առանց որևէ բացատրության նա այն գնահատել է 670 թ. տակ։ Հնագրության ձևերը ներկայացնելու նպատակով այս արձանագրությունը իր աշխատության մեջ օգտագործել է Դ. Հովսեփյանը[2], իսկ նրանից առաջ մի փոքր, բայց բացառիկ կարևորություն ներկայացնող հոդվածով այն հրատարակել է Հ. Ա. Օրբելին։ Վերականգնելով արձանագրության բացակայող հատվածները, Հ. Ա. Օրբելին այն վերծանեց հետևյալ ընթերցանությամբ՝

[Ամիո
1. [Ամիոյ կամ յն եր
2. ն. [սան ե եսներ]
3. Ի ինների]որդի Հերակղի բարեյաղթող թագաւորի յիշխանութեան Դաւթի ամենազով պատրկի կուրապաղատի եւ սպարապետի հայ]
4. Ոց եւ ասուոց եւ եպիսկոպոսութեանն սրբասիրի տեառն Թեոդփիղոսի եւ տանուտերութեան Ներսեհեի Շիրա]
5. Կայ եւ Աշարունեաց տեառն շինեցաւ սուբ եկեղեցիս ի բարեխաւսութիւն Կամսարականաց եւ Մրենոյ եւ ամենայն ազգի (*կամ* աշխարհի, *կամ* երկրի)։

Այս վերծանությամբ առաջին տողի սկզբից պակասում է 17 տառ։ Մեկ տողով դրանք գրվել չէին կարող, որովհետև շատ հեռու կանցներ երկրորդ և երրորդ տողերի սահմանից։ Այս հանգամանքը Հ. Ա. Օրբելուն ստիպել է թվագրությունը տեղադրել երեք տողով։ Սակայն արձանագրության սկզբում անսովոր տեղադրության այս ձևը VII դարում բոլորովին չի հանդիպում։ Նմանօրինակ ենթադրությունը տարակուսանքի տեղիք է տալիս նաև այս արձանագրության մեջ։

Անվիճելին այն է, որ երկրորդ քարի առաջին տողում պահպանված որդի վերջածանցը բառի սկիզբը պետք է նախատեսեր առաջին քարի վրա։ Իսկ այս դեպքում միանգամայն տրամաբանական է, որ երկրորդ և երրորդ տողերի սկիզբը ևս տեղադրվեր նույն քարին, գեռ ավելին՝ սկսվեր նույն սահմանից։ Այդ մասին կարող է վկայել նաև երրորդ տողի վերջավորության սեղմվածությունը, որից երևում է, որ գրիչը ցանկացել է առաջին և երկրորդ տողերի օրինակով երրորդ տողը ևս ավարտել տասնմեկերորդ քարի վրա։ Սակայն եթե երրորդ տողի վերջում այդ չեր հաջողվել, ապա տողերի սկզբում նրան ոչինչ չեր ստիպում այն գրել տարբեր սահմաններից։

---

1 «Վիմական տարեգիրք», կազմեց՝ Կ. Կոստանյան, ՍՊԲ, 1913, էջ 2։

2 Դ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1913, արձ. 6։

3 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, էջ 395։

Այսպիսով, ինքնըստինքյան անխուսափելի է դառնում առաջին և երկրորդ տողերի վերջավորության որոնումը ոչ թե տասներկուերորդ, այլ առաջին քարի վրա, որպես, համապատասխանաբար, երկրորդ և երրորդ տողերի սկիզբ։ Առաջին քարից, այսպիսով, պետք է բացակայի 6—8 տառ յուրաքանչյուր տողում։ Ավելինի դեպքում այն հնարանալու է տողերի ընդհանուր սահմանից, որը չափազանց անհավանական է։ Հ. Ա. Օրբելու վերծանության մեջ երկրորդ տողից բացակայում է 8 (չհաշված պատուհանի մոտի հատվածը), երրորդ տողից՝ 6, սակայն թվագրությունը պարունակող առաջին տողից՝ 17 տառ։ 9—11 տառերի տարբերությունը մեկ քարի վրա բոլորովին անհնարին է, մանավանդ նման համաչափ տառերով փորագրված արձանագրության մեջ։ Քանի որ առաջին տողի սահմանը երկրորդ և երրորդ տողերի սահմանից 9—11 տառերի դրաղեցրած տարածությամբ հնարացնելու ոչ մի հիմք չունենք, ուստի հարցի լուծման միակ ելքը թվագրության տեղադրման և թվականի վերանայումն է, որի համար հիմք են տալիս նաև պատմիչների վկայությունները։

Հ. Ա. Օրբելին ենթադրում է, որ արձանագրության յոթերորդ՝ բացակայող քարի առաջին տողում կյուրապաղատի անվան տակ Դավիթ Սահառունին է եղել, իսկ այնուհետև հենվելով այդ ենթադրության վրա, արձանագրությունը թվագրում է 639—640 թթ.։ Եվ որովհետև Սեբեոսի տեղեկության համաձայն Սահառունին Հերակլ կայսեր կողմից կյուրապաղատ է նանաչվել Աթաշարիկոսի դավադրության միջադեպից հետո՝ 637—638 թթ., իսկ արձանագրության մեջ Սահառունին հիշատակված է հունական տիտղոսներով, որևմն խոսքը այս շրջանի՝ այսինքն Հերակլ կայսեր քսանութերորդ-երեսուներորդ տարիների ժամանակամիջոցի մասին է, որտեղ որդի վերջածանցը պետք է [խան և իններ]որդի, կամ [երեսներ]որդի թվականի պահպանված հատվածը լիներ։

Որպես ապացույց Հ. Ա. Օրբելին բերում է նաև այն հանգամանքը, որ արձանագրությունը թվագրված է ոչ թե Խոսրով Փարվեզի գահակալության տարիներով, այլ Հերակլի, այդ բանը նա հնարավոր է համարում միայն այն ժամանակաշրջանի համար, երբ Շիրակը գտնվում էր բյուզանդական տիրապետության մասում։ Սակայն այս մեկնությունը հանդիպում է մի լական-ռարկության՝ արձանագրությունների թվագրման հարցում ժամանակին այդպիսի նկատառումներ չեն եղել։ Նրանց թվականները գրվել են միանգամայն կամայականորեն։ Դրա օրինակներին կարելի է հանդիպել նաև Շիրակում։ Գրեթե նույն ժամանակաշրջանում գրված Բագարանի (631 թ.) և Ալամանի (637 թ.) եկեղեցիների շինության արձանագրություններից մեկը թվագրված է Խոսրովի, իսկ մյուսը՝ Հերակլի գահակալության տարիներով։ Ինչ վերաբերում է Դավիթ Սահառունուն, ապա ըստ Ասողիկի[4] նա մարզպան է եղել նաև ավելի վաղ շրջանում՝ Փոկասի կայսրության տարիներին։ Այս հանգամանքը դեռևս ոչինչ չի ասում, որովհետև խոսքը տվյալ դեպքում վերաբերում է ոչ թե մարզպան Սահառունուն, որպիսին նա համարվում էր Հայաստանի պարսկական հատվածում, այլ կյուրապաղատ Սահառունուն, այսինքն այն ժամանակաշրջանին, երբ իշխանապետության պաշտոնը նրան շնորհեց Հերակլ կայսրը։ Սակայն պատմիչների մոտ կարելի է հանդիպել մի շարք այնպիսի ստույգ տեղեկությունների, որոնք լայն հնարավորություն են ընձեռում Սահառունուն մարզպանության շրջանում ևս կյուրապաղատ տեսնելու։ Կայսրության սրհասական տարիներին, երբ բյուզանդական բանակները պարտություն պարտության հետևից էին կրում, Հերակլը բավականին մեծ կարիք պետք է ունեցած լիներ կարևոր դաշնակից ձեռք բերելու հանձին մարզպանի և բյուզանդական կողմնորոշում ունեցող հայ ժողովրդի, այն էլ Հայաստանի ռազմաբեմում, որը ամենակարևորներից մեկն էր, թերևս կարևորագույնը։ Մենք ոչ մի հիմք չունենք պնդելու, թե Հերակլը այս առիթը չի օգտագործել և իր հերթին չի ճանաչել Սահառունու իշխանապետությունը Հայաստանում, շնորհելով նրան պատրիկի և կյուրապաղատի տիտղոսները։

Սահառունու բյուզանդական կողմնորոշման վճռական շրջադարձ պետք է կապել Փոկասի (602—610 թթ.) գահընկեցության և Հերակլի (610—641 թթ.) գահակալության հետ։ Փոկասի կատարած հասարակական վերափոխությունները առանձնապես մեծ հրճվանք չպատճառեցին երկրի վերնախավին և խոշոր հողատեր նախարարների շրջանում, տեղիք տվեցին ուժեղ հակամարտության, որը տվյալ ժամանակամիջոցում գլխավորեց Աֆրիկայի փոխարքա Հերակլը։ Նրա հաղթանակը 610 թ. և Փոկասի բռնապետության թոթափումը, հասկանալի է, որ գոհունակությամբ պետք է ընդունվեր նաև հայ նախարարների կողմից։ Հերակլի հաղթական երթը քաղաքացիական կռիվներում մեծ հույսեր էր ներշնչում նաև պարսկա-բյուզանդական ռազմաբեմում բեկում մտցնելու գործում։ Թերևս այս, իսկ առավել ևս՝ Հերակլի հայտարարած կրոնական պատերազմի-

4 Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 86։

արձագանքն էր, որ Մրենի տաճարի արձանագրության մեջ սուրբ Խաչի փրկության համար կռվող կայսրը անվանվեց «բարեյաղթող թագաւոր», չնայած նրա վիճակը այդ շրջանում դեռևս այնքան էլ երանելի չէր։ 639 թ. նա «բարեյաղթող» չէր անվանվում, թեև այդ ժամանակ արդեն հաղթանակած էր և ս. Խաչն էլ վերադարձրած, սակայն հաղթանակը կայացել էր տարիներ առաջ և այս շրջանի համար ավելի բնութագրական էին «բարեպաշտ» և «աստուածապահ» մեծարումները, որոնց հանդիպում ենք այդ տարիներին գրված Ալամանի (637) և Բագավանի (639) արձանագրություններում։

Վերին աստիճանի ուշագրավ է այն հանգամանքը, որ տարիներ անց, երբ Սահառունին մեղադրվում էր Աթալարիկոսի դավադրությանը մասնակցելու մեջ (հավանաբար՝ ձգտելով վերականգնել իր վաղեմի իրավունքները), և նույնիսկ երբ սպանում է իրեն ձերբակալող բյուզանդական զորավար Մժեժ Դենունուն, Հերակլը, պատժելու փոխարեն, նրան նորից վերականգնում է իշխանապետի պաշտոնում։ Այս փաստը միայն մի հիմք կարող էր ունենալ, այն է՝ Հերակլի բարյացակամ վերաբերմունքը Սահառունու նկատմամբ, որը նա վաստակած պետք է լինի կայսեր գահակալության առաջին տարիներին։

Բավական պերճախոս և կարևոր է արձանագրության մեջ Սահառունու «Հայոց», եւ «Ասորուց» սպարապետի տիտղոսը։ Այն ժամանակ, երբ պարսկա-բյուզանդական բանակների գործողության հիմնական վայրը Հայաստանն ու Ասորիքն էին, այս տիտղոսավորումը ինչ-որ քաղաքական իմաստ ուներ և դիվանագիտական տեսակետից կանխամտածված քայլ էր։

Շատ բան է ասում նաև այն, որ Սահառունու մարզպանությունը Խոսրովը երկար չի հանդուրժել։ Հասկանալի է, որ կայսեր և մարզպանի մերձեցումը չէր կարող վրիպել նրա տեսադաշտից կամ անուշադրության մատնվել։ Թեև Սահառունու մարզպանության շրջանի վերաբերյալ ժամանակագրական ստույգ տվյալներ չեն հասել մեզ, սակայն հայտնի է, որ Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ (615—628 թթ.), այսինքն պարսկա-բյուզանդական պատերազմների երկրորդ շրջանում, մարզպանի պաշտոնը Հայաստանում թափուր է մնում, իսկ հետագայում՝ 628 թ. երևան է գալիս Սմբատ Բագրատունու որդին՝ Վարազ Տիրոցը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, պատմական անցքերը և ստեղծված քաղաքական պայմանները որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ Դավիթ Սահառունին իր մարզպանության շրջանում վայելած լինի նաև կայսեր ճանաչումը՝ իշխանապետության իր պաշտոնում։ Սակայն այս ամենը, իհարկե, սոսկ ենթադրություններ չեն։ Պատմիչների վկայությունները ոչ միայն հաստատում են այս, այլև լրացուցիչ ստույգ և որոշակի տեղեկություններ են տալիս նաև ժամանակի, անգամ թվականների վերաբերյալ։

Եթե արձանագրության վնասվածությունը և պատմական կցկտուր տեղեկությունները հնարավորություն չեն տալիս ենթադրություններից ավելի առաջ անցնել, ապա պատմիչների հաղորդած վկայությունները տաճարի կառուցման վերաբերյալ շատ ավելի հավաստի են և մեծ կարևորություն են ներկայացնում։

Պատմիչներից առաջինը Հովհաննես Դրասխանակերտցին է, որ տեղեկություն է հաղորդում Մրենի տաճարի կառուցման մասին։ Ահա այդ վկայությունը. «Ի սմին յայսմիկ աւուրս կայսրն Հերակլ զԴավիթ Սահառունի կուրապալատ արարեալ իշխան հայոց կացուցանէր... Եւ ի հրամանէ նորան շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ ի քաղաքագիւղն Մրենն»[5]։ Եթե Դրասխանակերտցու տեղեկությունը ժամանակագրության հարցում դեռևս ոչինչ չի պարզում, ապա բոլորովին այլ է Կիրակոս Գանձակեցու հաղորդումը, որն այս տեսակետից առանձնահատուկ կարևորություն ունի։ «Դաւիթ Սահառունի,— գրում է Գանձակեցին,— մարզպան լեալ է ամս երեսուն։ Յաւուրս սորա ի ԿԲ թուականին եղև շինուած կաթողիկէին Մրենոյ»[6]։

Ինչպես տեսնում ենք, Գանձակեցին ոչ միայն չի հիշատակում կյուրապաղատության հանգամանքը, այլև շեշտում է, որ կառուցումը տեղի է ունեցել մարզպանության շրջանում, ընդ որում տալիս է նաև կառուցման կոնկրետ թվականը՝ 613 թ. Այս վկայությունը համեմատության մեջ դնելով արձանագրության մեջ հիշատակված պատրիկ և կյուրապաղատ տիտղոսների հետ, անմիջականորեն պետք է կատարենք մի անխուսափելի հետևություն՝ եթե Գանձակեցին վկայում է, որ եկեղեցին կառուցվել է 613 թ., երբ Սահառունին մարզպան էր, իսկ արձանագրությունը հաղորդում է, որ նա կյուրապաղատ էր, ուստի միանգամայն պարզ է դառնում, որ 613 թ., մարզպան եղած ժամանակ, Սահառունին ճանաչվել է նաև կյուրապաղատ Հերակլի կողմից։ Արձանագրությունն իր ներկա վիճակում թվականը չի հաղորդում, իսկ պատմիչը հաղորդում է, ար-

5 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 80։
6 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երևան, 1961, էջ 53։

ձանագրություններ նրան անվանում է պատրիկ և կյուրապաղատ, իսկ պատմիչը՝ մարզպան։ Այս տարաձայնությունները վերջին հաշվով կարելի է վերացնել միայն պատմական անցքերի վերլուծությամբ, իսկ սրանք վստահեցնում են, որ Սահառունին եղել է և՝ մարզպան, և՝ կյուրապաղատ։ Վերջապես, կարևորը թվականն է, իսկ այդ մասին եղած միակ աղբյուրը պատմիչներն են, որոնց վկայած թվականներ տեղադրվում է արձանագրության պակասավոր հատվածի այն շրջանակներում, որ ամենահավանականն է նրա համար։

VII դարի պատմիչներից ոչ մեկը Մրենի տաճարի կառուցման մասին տեղեկություն չի հաղորդում, ուստի հետագա պատմիչների վստահ վկայությունները, որպես սկզբնաղբյուր, հենվել են միայն այս արձանագրության վրա։ Հենց այստեղից էլ գալիս է այն հավաստիությունը, որը տվյալ մեկնության համար ունեն պատմիչները։ Եթե այսօր մենք ենթադրություններ ենք անում արձանագրության բացակայող հատվածները լրացնելու համար, ապա նրանք ենթադրության կարիք չեն ունեցել և քաղել են տվյալները այնպես, ինչպես որ հաղորդել է արձանագրությունը իր ամբողջական վիճակում։

Ելնելով պատմական անցքերի հավանական նախադրյալներից և հիմք ունենալով պատմիչների հաղորդած որոշակի և հաստատուն վկայությունները, արձանագրության թվականը պարունակող կորած քարի համար առաջարկում ենք հետևյալ ընթերցանությունը՝

1. Յամի երրորդի Հերակղի բարեյաղթող թագաւորի յԻրիանուրեան Դաւթի ամենագով պատրկի կուրապաղատի և սպար

2. Խապետի հայոց և ասորւոց և յեպիսկոպոսուրեանն սրբասիրի տեառն Թեոփիղոսի և տանուտերուրեան Սերսեհ

3. Ի հի Շիրակայ եւ Աշարունեաց տեառն շինեցաւ սուրբ եկեղեցիս ի բարեխաւսութիւն Կամսարականաց և ամենայն աղգի (կամ երկրի նամ աշխարհի)։

Կամսարականաց և Մրենոյ ամենայն աղգի (կամ երկրի կամ աշխարհի)։

ՈՐԻՀԵՐԱԼ ԶԻԲԱՐԵՅԱՆԹՈՂԹԱԳԱՒՈՐԻ ԿԱՆ ՈՒՌԵ
ՌՅԵՒԱՍՈՐՈՒՈՅԹ Ի ԵՊԻՍԿՈՊՈՍՈ ԻՌԵԱՆՆՍՐԲԱ
ԿԱՅԵՒԱԾ ԱՐՈՒՆԵԱՅՄ ՅԵԼՈՆՇԻՆԵՑԱՒ ՍՈՒՐԲԵԼԵՂԵՑ



ՅԵՆԱԳՈՂԱՊԱՅՐԿԻԿՈՒՐԱԳԱՂԱՄ'ԵՒՊԱՐ
ԶԼԱՓՂՈՍԻ ԵՒԽՄԱՆՈՒ ՅԵՐՈՒՌԵԱՆԵՐՍԵ
ԶԻՈՒՆԱԱՄ ՍԱՐԱԿԱՆԱՑԵՒ ՄՐԵՆՈՅ ԵՒԱՄԵԱ

Գծ. 1

Այսպիսով, արձանագրության այն հատվածը, որը փորագրված է եղել առաջին քարի վրա՝ ունեցել է միայն 6-ից 8 տառ տեղադրելու տարածություն, այժմ կարելի է վերականգնել առանց նրանց սահմանները խախտելու. առաջին տողը լրացվում է 7, երկրորդը՝ 8 և երրորդը՝ 6 տառով։ Թվականը տառաթվով գրված լինել չէր կարող, որի վերջածանցը ցույց է տալիս, որ այն գրված պետք է լիներ միայն բառով։

Այժմ, ամբողջացնելով պատմական անցքերի ու արձանագրության հաղորդած դեպքերի վերլուծությունը, մի երկու խոսքով անդրադառնանք նաև Ներսեհ Կամսարականին, որի տան բարեխոսության համար կառուցվել է Մրենի հոյակապ եկեղեցին։ Ներսեհ Կամսարականը VII դարի առաջին կեսի անձնավորություն է։ Այն հանգամանքը, որ նրա, ինչպես և Կամսարականների տան եպիսկոպոս Թեոփիղոսի անունները հիշատակված են նաև Ալամանի 637 թ. արձանագրության մեջ, մեր մեկնությանը բոլորովին չի հակասում։ Ժամանակաշրջանն այնքան էլ մեծ չէ։ Եթե Դավիթ Սահառունին, Հերակլը ապրել և գործել են այդ երկու շրջաններում, ապա նույնը կարող էին անել նաև Ներսեհը և Թեոփիղոսը։

Հաշվի առնելով այս հանգամանքը, միանգամայն բնական պետք է համարել Ներսեհ Կամսարականի անունը Շիրակի հուշարձանների վրա 613—637 թթ.։

Այս արձանագրության մեջ պարզ չէ, թե ով է շինության իսկական կառուցողը։ Այն գրված է երրորդ դեմքով և անունը չի հիշատակված։ Դրասխանակերտցին հաղորդում է, որ եկեղեցին կառուցվել է Սահառունու հրամանով։ Նույն ձևով է հավաստիացնում նաև Վարդան Բարձրաբերդցին, իսկ Գանձակեցին միայն նշում է, որ նրա ժամանակ է կառուցվել։ Ուշագրավ է, որ արձանագրությունը ևս Սահառունուն ոչ մի առնչության մեջ չի դնում եկեղեցու կառուցման հարցում և հիշատակում է նրան միայն ժամանակագրության տեսանկյունով, ինչպես Հերակլին և Ներսեհ Կամսարականին։ Սակայն վերջինս այստեղ մի առավելություն ունի՝ շինությունը կառուցված է նրա տան բարեխոսության համար։ Սահառունու հրամանի մասին պատմիչների հաղորդած վկայությունը այստեղ պետք է հասկացվի որպես վարչական միջոցառում, որի նախաձեռնումն ու

նպաստավորումը, անկասկած, Ներսեհ Կամսարականի կողմից է եղել։ Ահա այդ է պատճառը, որ Սահառունիների կալվածքում կառուցված եկեղեցին նվիրված է նախ Կամսարականների տան և ապա նաև Մրենի և ամենայն ազգի բարեխոսությանը։ Եվ քանի որ տվյալ դեպքում աջակցության ու նպաստավորման պարագաները հնարավորություն չեն տվել առանձնացնելու նրա շինողի անունը, ուստի այն դրվել է երրորդ դեմքով, իսկ նրանք հիշատակվել են ժամանակագրության տեսանկյունով, որը ոչ պակաս պատվաբեր է եղել։ Ինչ վերաբերում է Թեոփիղոսին, ապա նա եղել է Կամսարականներին տան եպիսկոպոսը։

Այսպիսով, պատմիչների տված վկայությունները և արձանագրության ուսումնասիրությունը բերում են այն եզրակացության, որ Մրենի կաթողիկեն կառուցվել է 613 թ., Դավիթ Սահառունու հրամանով, ներսեհ Կամսարականի միջոցներով և Թեոփիղոսի հոգևոր նախաձեռնությամբ։

Արձանագրությունը, ինչպես նաև պատմիչները, այլ մանրամասնություններ չեն հաղորդում։

ներսեհ Կամսարականի շինարարական գործունեության ամենահոյակապ կառույցներից մեկն է եղել Թալինի ս. Աստվածածին եկեղեցին։ Ի տարբերություն Կամսարականների մնացած շինությունների, այն կառուցվել է ոչ թե Շիրակում, այլ Արագածոտնում։ Արագածոտնի այդ հատվածը, պատկանելով Կամսարականներին, վարչականորեն մտել է Շիրակի մեջ։ Պատմական, իսկ առավել ևս մշակութային առումով այս հուշարձանը շատ ավելի կապված է VII դ. Շիրակի, քան Արագածոտնի հետ։ Կարևորն այն է, որ ինչպես հուշարձանը, նույնպես և նրա արձանագրությունը կառուցել և փորագրել են Շիրակի տերերը։

Կամսարականների թողած վիմագիր հիշատակարանների շարքում Թալինի եկեղեցու շինության արձանագրությունը միակ օրինակն է, որի մեջ Շիրակի և Աշարունյաց տերը բարեխոսություն է մաղթում զուտ իր ընտանիքի անդամների համար։ Այս տեսակետից Թալինի ս. Աստվածածին եկեղեցու հիշատակարանը առավել կարևորություն ունի Կամսարականների տոհմական պատմության ժամանակագրական մի շարք հարցերի լուսաբանման գործում։

Արձանագրությունը թվագրված չէ։ Ուսումնասիրության ենթարկելով այն, գիտնականները ժամանակին մեծ տարաձայնություններ են ունեցել նրա թվագրման հարցում։ Առաջին անգամ արձանագրությունը հրատարակել է Շահխաթունյանցը[7], այնուհետև հրատարակել է Ալիշանը[8]։ Հրատարակել է նաև Մեսրոպ եպ. Տեր-Մովսեսյանը[9] և թվագրել այն VII դարի վերջին քառորդով։ Գ. Հովսեփյանը գտնում է, որ այն կարելի է թվագրել VII դարի 30-ական թթ.[10]։ Այս արձանագրությունը մանրաշնին ուսումնասիրության է ենթարկել ակադեմիկոս Հ. Օրբելին[11] և նույնպես եկել այն համոզման, որ արձանագրությունը VII դարի 30-ական թթ. է փորագրված։ Ահա այս արձանագրության վերծանությունն ու գծագրական պատճենը՝

1. Ես Ներսեհ ասպետ պատրիկ, Շիրակայ և Աշարունեաց տեր. շի
2. նեցի զեկեղեցիս յանուն սրբոյ ածածնին ի բարեխաւսու
3. թիւն ինձ և Շուշանայ, ամուսնոյ իմոյ եւ
4. Հրանատայ որդւոյ մերոյ։



Գծ. 2

Արձանագրության փորագրման ժամանակի առնչվածը պարզաբանելու հնարավորություն են ընձեռում միայն նրանում հիշատակված անձինք։ Նրանց ապրած ճշգրիտ ժամանակաշրջանը որոշելով և թվագրված այլ արձանագրությունների տվյալների հետ համեմատելով միայն հնարավոր է որոշ, բայց թերևս հաստատուն կողմնորոշում ունենալ արձանագրության ժամանակի վե-

---

7 Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէի էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, հատ. 2, էջմիածին, 1842, էջ 50։

8 Ալիշան, Այրարատ, էջ 137։

9 Մ. եպ. Տեր-Մովսեսյան, Սոկրատայ սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897, ՂԳ։

10 «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 173։

11 И. А. Орбели, Избранные труды, էջ 433։

բարերյալ։ Արձանագրության մեջ հիշատակված է երեք անուն՝ Ներսեհ Կամսարականը, նրա կին Շուշանը և որդին՝ Հրահատը։ Ներսեհ Կամսարականին հանդիպում ենք Մրենի, Ալամանի և Նախճավանի արձանագրություններում։ Այս արձանագրություններից առաջինը, ինչպես տեսանք, գրված է եղել 613 թ., Ալամանինը՝ 637 թ., իսկ Նախճավանի արձանագրության թվականը հայտնի չէ։ Շուշանի անունը հիշատակված է միայն այս արձանագրության մեջ, իսկ Հրահատի անունը այս և Արտավազդ Կամսարականի դամբարանի արձանագրություններում։ Ներսեհ Կամսարականի անունը կրող վերջին արձանագրությունը փորագրվել է 639 թ.։ Նախճավանի եկեղեցու վիմագիր հիշատակարանի ժամանակը թեև հայտնի չէ, բայց և այնպես նրա բովանդակությունից երևում է, որ կառուցողը Ներսեհ Կամսարականի որդին՝ Հրահատն է եղել[12]։

Հրահատին հիշատակող Թալինի ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունը նրան անվանում է «որդի», առանց որևէ տիտղոսի, իսկ Արտավազդ Կամսարականի դամբարանում Հրահատը հանդես է գալիս որպես «տէր Շիրակայ և Աշարունեաց»։ Այստեղից միանգամայն բնական է այն հետևությունը, որ Արտավազդ Կամսարականի դամբարանը շինելիս Ներսեհ Կամսարականը այլևս գոյություն չուներ և տանուտերի տիտղոսները ժառանգել էր նրա որդին՝ Հրահատը։ Անհրաժեշտ է հետևցնել նաև, որ Թալինի արձանագրությունը ժամանակագրությամբ ավելի հին է, քան Արտավազդ Կամսարականինը, քանի որ առաջինի վրա այդ տիտղոսները դեռևս պատկանում էին Ներսեհին։ Միանգամայն հասկանալի է, որ Հրահատը Շիրակի և Աշարունյաց տիրոջ տիտղոսը կարող էր ժառանգել առնվազն 639 թ. հետո, քանի որ մինչև այդ ստույգ հայտնի է Ներսեհի գոյությունը։ Տիտղոսավորման հանգամանքը այստեղ այնքան ռեալ հնարավորություն է ստեղծում, որ կարելի է նրան ավելի մանրամասնորեն անդրադառնալ։ Բացի «տէր Շիրակայ և Աշարունեաց» տիտղոսից արձանագրություններում մենք հանդիպում ենք նաև «պատրիկ» և «ապահիպատ» տիտղոսներին։ Ուշագրավն այն է, որ այս վերջինս կրում էին Կամսարական տան զավակները մինչև տանուտեր դառնալը։ Այդպես է հիշատակված Արտավազդ Կամսարականը Նախճավանի տապանագրում[13]։ Սակայն այդ տիտղոսը, սպասածին հակառակ, չի կրել Հրահատը, երբ հիշատակվել է Թալինի եկեղեցու արձանագրության մեջ։ Մեր կարծիքով դրա պատճառը պետք է որոնել տարիքային առանձնահատկություններում։ «Ապահիպատ» կամ «պատրիկ» (կամ երկուսն էլ միասին) տիտղոսները Կամսարական տան արու զավակները ձեռք էին բերում պատանեկության հասակից, իսկ որդուց մեծոց պարզագույն արտահայտությունը, առանց որևէ մեծարման, հնարավոր կարող էր լինել միայն մանուկի նկատմամբ։ Այս ենթադրությանը որոշ չափով օժանդակում են նաև Ներսեհ Կամսարականի տարիքի և ապրած ժամանակի վերաբերյալ կատարած ճշտումները։ Քանի որ Ներսեհ Կամսարականի անունը հիշատակվում է 613 թ. արձանագրությունում և այն էլ Հերակլ կայսեր և Դավիթ Սահառունու հետ ժամանակագրության տեսանկյունով, ուստի պետք է հետևեցնել, որ VII դարի սկզբներին Ներսեհ Կամսարականը Շիրակի և Աշարունիքի տանուտիրոջ տիտղոսը կրելիս հասուն տարիքում է եղել։ Իսկ 640-ական թթ. ծերացած, թերևս և մահացած լիներ։ Այսպիսով, ստացվում է որոշ կողմնորոշում Ներսեհ Կամսարականի կյանքի մոտավոր ժամանակաշրջանի մասին։ Նա ծնված պետք է լիներ VI դարի չորրորդ քառորդի սկզբներին և մահացած՝ VII դարի 40-ական թթ.։ Այսպիսի պատկերացման համաձայն նրա որդի Հրահատը ծնված պետք է լիներ VII դ. առաջին տասնամյակին։ Բոլոր դեպքերում, Թալինի եկեղեցու կառուցման ժամանակ, որի արձանագրության մեջ նա հիշատակված է իբրև որդի, Հրահատը եղել է մինչպատանեկան հասակում։ Եթե VII դարի առաջին տասնամյակը ընդունենք Հրահատի ծննդյան հավանական տարիներ, ապա միանգամայն պարզ կլինի, որ Թալինի ս. Աստվածածին եկեղեցու շինության արձանագրությունը փորագրված է եղել մոտավորապես նույն ժամանակաշրջանում ինչ և Մրենի տաճարինը (613 թ.)։ Որպես Մրենի տաճարի ժամանակակից, այս եկեղեցու շինության արձանագրությունը նմանություն ունի նրա հետ նաև իր տառաձևերով՝ ու տեղագրությամբ՝ եկեղեցու արևմտյան պատի վերին մասում, պատուհանի երկու կողմերում։ Պետք է ասել, որ այս երկուսը հիշատակված առանձնահատկություններով նկատելիորեն տարբերվում են VII դարի մյուս արձանագրություններից։

Վերոհիշյալ հանգամանքները իրական հիմք են ստեղծում ժամանակագրությամբ այն մոտեցնել ավելի Մրենին, քան թե Ալամանի կամ Բագարանի տաճարներին։

---

12 Նույն տեղում, էջ 434։

13 Տապանագրում հիշատակված է տէր Արտավազդ Կամսարական ապահիպատ պատրիկ Եւ իշխան հայոց։ Տե՛ս Հ. Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ 432։